



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.71-3  
4-28

891.71-3

4-28

066500

4620

101147 416 FRM





Աղբեւրի եւ Ճարապի > բաժանորդներին նոէլ թարգմանչից.

Թ Շ Խ Ա Բ Լ Ի Զ Ա

Թ Շ Խ Ա Բ

Ճ Գ Ա Բ Ա Ն , Ե Ր Օ Ր Ա Ճ Ն Ա Զ Ե Ր Ե Ը Ն Ի  
Ք Ո Յ Հ Ա Մ Ա Կ Հ Ա Պ Ո Ս Ա Վ Ե Կ Մ Ա Կ Մ Ա Կ Հ Ա Կ :

1891



«Աղբյուրի եւ Տարագի» բաժնինորդներին նույն թարգմանչից.

891.71-3

Կ-28

Թ Շ Խ Ա Ռ Լ Ի Զ Ա

(ԿԱՐԱՄ-ԶԱՆՀՑ)

Թուարգ մշանութիւն

25K.

ՄԻՋԱՑԻ, ԱՐԴԱՐԵԱՆՑԻ

14X9 Ալեքսանդր

Թ Ի Գ Լ Ի Ս





10/01

539.

Дозволено цензурою. Тифлисъ, 21 марта 1891 г.

Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул.

## Թ Ծ Ի Ա Ռ Լ Ի Զ Ա

Կարելի է Մոսկվա բնակչողներից ոչ  
ոք չէ ճանաչում՝ այդ քաղաքի շրջակայքը  
այնպէս լաւ, ինչպէս ես, որովհետեւ ոչ ոք  
ինձնից աւելի շատ չէ թափառում՝ զլուխը  
վերցրած, առանց ոք եւ է նախազծի եւ ան-  
նպատակ՝ մարզագետիններում, դաշտերում՝  
եւ անտառներում՝ բլուրներում՝ եւ դաշտա-  
վայրերում։ Ամեն ամառ զտնում՝ եմ՝ աւելի  
ախորժակի տեղեր կամ՝ թէ հին ծանօթ տե-  
ղերի մէջ զտնում՝ եմ՝ նոր գեղեցկութիւններ։

Բայց միշտ ինձ համար ամենից դուքե-  
կան է եղել այն տեղը, որտեղ բարձրանում՝  
են Ս... մենաստանի մոայլ գոթական աշ-  
տարակները։ Կանգնելով այդ սարի վրայ՝  
տեսնում՝ ես աջ կողմին համարեա ամրող Զ  
Մոսկվան՝ տների եւ եկեղեցիների այն սոս-  
կալի գումարտակը, ոք ներկայանում՝ է աշ-  
քերիդ հոյակապ ամիկիթիատրոնի ձեւով

վսեմ՝ է այդ պատկերը, մանաւանդ, երբ  
 նրա վրայ փայլում՝ է արեգակը։ Երբ նրա  
 երեկոյեան ծառագայթները փալփլում՝ են  
 նրա դէալի երկինք քարձրացող անթիւ ու-  
 կեայ զմբէթների եւ խաչերի վրայ։ Ներքե-  
 տում՝ տարածում՝ են պարարտ, կանաչ-ծաղ-  
 կաւէտ դաշտերը, իսկ նրա յետեւում՝ դեղին  
 աւագի վրայով հոսում՝ է փայլուն գետը, որ  
 կամ՝ յուզուում՝ էր ծկնորսական նաւակների  
 թեթեւ թիակներով եւ կամ մոնչում՝ էր  
 ըեռնաւորւած նաւակների ծանրութեան տակ,  
 որոնք Ռուսաց Կայսրութեան ամենաքերքի  
 կողմերից լողալով գալիս են որկրամոլ Մոսկ-  
 վային հաց մատակարարելու։ Գետի միւս  
 կողմումն երեւում՝ է կաղնի անտառը, որի  
 մօտ արածում՝ են քազմաթիւ հօտեր։ այս-  
 տեղ երիտասարդ հովիւները, նստած ծառե-  
 րի ստերի տակ՝ երգում՝ են պարզու թախ-  
 ծալի երգեր եւ այդպիսով կարճացնում՝ են  
 ամարային երկար, նրանց համար միատեսակ  
 ճանձրալի օրերը։ Աւելի հեռուն, հին կնճնի-  
 ների խիտ կանաչի մէջ, փայլում՝ է ոսկե-

զմբէթ Դանիլով մենաստունը եւ աւելի հեռու, համարեա հորիզօնի վերջումը, կապտին են տալիս Վորօքինիյ սարերը։ Զախ կողմից երեւում՝ են ընդարձակ, ցորենի արտերով ծածկւած դաշտեր, անտառներ, երեք կամ՝ չորս գիրզեր եւ հեռու Կոլոմինսկի գիւղն իր բարձր ապարանքով։

Յաճախ եմ՝ զալիս ես այդ տեղերը եւ համարեա թէ միշտ այդտեղ եմ՝ պատահում՝ զարնանը, զալիս եմ՝ այդտեղ նաեւ աշնան մուայլ օքերին վշտակից լինելու ընութեանը։ Զարհուրելի կերպով ոռնում՝ է կատաղի քամին դատարկ մենաստանի պատերի, բարձը խոտով ծածկւած զերեզմանների եւ խուցերի մութ անցքերի մէջ։ Այնտեղ յենած ահազին շիրիմների քեկորների վրայ, լուս եմ՝ անհուն անցեալի մէջ խորասուզած ժամանակների խուլ հառաշանքը, որից եւ իմ սիրտը յուզում՝ է եւ դողում։ Երբեմն մըտնում՝ եմ՝ խուցերը եւ երեւակայում՝ եմ՝ նըրանց՝ որոնք ընակւել են այդտեղ—տխուր տեսարաններ . . . Այդտեղ տեսնում՝ եմ՝

ալեզարդ ծերունուն, ծունկ չոքած խաչելու-  
 թեան պատկերի առաջ եւ աղօթում է, որ  
 շուտով բարձւին իր երկրային շղթաները,  
 որովհետեւ նրա համար բոլոր վայելչութիւն-  
 ները սպառել են կեանքի մէջ, նրա բոլոր  
 զգացումները մեռել են, բացի հիւանդու-  
 թեան եւ թուլութեան զգացումը: Այդտեղ ե-  
 րիտասարդ աքեղան զունաթափ դէմքով,  
 թոյլ նայւածքով պատուհանի վանդակից  
 մտիկ է տալիս դէպի դաշտը, տեսնում է  
 ուրախ թռչուններին, որոնք ազատ թռչկո-  
 տում են օդային ծովի մէջ, տեսնում եւ  
 դառն արտասուզներ է թափում աչքերից:  
 Նա տառապում է, թառամում է, չորանում  
 է եւ զանգակի տիտր ծայնը յայտնում է  
 ինձ նրա տարաժամ մահը: Երբեմն տաճա-  
 րի դռների վրայ տեսնում եմ այն հրաշա-  
 լիքների պատկերացումը, որոնք - այդ մե-  
 նաստանում պատահել են. այդտեղ ծկները  
 թափում են երկնքից մենաստանի ընակիչ-  
 ներին կերակրելու համար, որոնք շրջա-  
 պատած են անթիւ թշնամիներով. այդտեղ

Աստւածամոր պատկերը թշնամիներին փախցնում՝ է։ Այս բոլորը նորոգում՝ են յիշողութեանս մէջ մեր հայրենիքի պատմութիւնը. տիրալի պատմութիւնը այն ժամանակների, երբ որ կատաղի թուրքերը եւ լեհացիք առիք ու կրակով աւերել են Ռուսաց մայրաքաղաքի շրջակայքը եւ դժբախտ Մուկուն անպաշտպան այրիի պէս իր դաժան թշւառութեան մէջ միայն Աստւածանից էր սպասում օգնութիւն։

Բայց աւելի շատ ինձ գրաւում՝ է դէպի Սի—նով մենաստանի պատերը, թշւառ Հիզայի ողբալի վիճակի յիշատակը։ Այս, ես սիրում՝ եմ՝ այն առարկաները, որոնք շարժում են իմ սիրտն եւ ստիպում են ինձ արտասուք թափել։

Մենաստանի պատից եօթանատուն սաժէն հեռաւորութեան վրայ թխտենի անտառի մօտ՝ կանանչ դաշտի մէջ կանգնած է դատարկ խրճիթ, առանց դռների, առանց լուսամուտների եւ առանց յատակի, իսկ կտուքը վաղուց փտել է ու թափւել։ Երե-

սուն տարի սրանից առաջ, այդ իր ծիթում՝  
քնակում՝ էր գեղեցիկ, քարի Լիզան իր պա-  
ռաւ մօք հետ:

Լիզայի հայրը քաւականին հարուստ  
գիւղացի էր, որովհետեւ սիրում՝ էր գործը,  
լաւ հերկում՝ էր նա եւ միշտ վարում՝ էր  
համեստ կեանք, բայց նրա մահանից յետոյ  
կինն ու աղջիկն աղքատացան: Վարձկանի  
ծոյլ ճեռքը վատ էր մշակում՝ դաշտը, եւ  
հացը միշտ սակաւ էր լինում—նրանից հար-  
կադրած էին շատ թեթեւ գումարով վար-  
ծով տալ իրանց հողը: Բացի դրանից թըշ-  
ւառ այրին համարեա անդադար արտասւե-  
լով իր ամուսնու մահան համար (որովհե-  
տեւ եւ գեղջկունին գիտէ սիրել), օրէ օր  
թուլանում՝ էր եւ բոլորովին չէր կարողա-  
նում աշխատել: Միայն Լիզան, որ հօր  
մահանից յետոյ տասնունինգ տարեկան էր,  
միայն նա չըխնայելով իր նազելի պատա-  
նեկութիւնը, չըխնայելով իր հազարիտ գե-  
ղեցկութիւնը՝ աշխատում՝ էր օր եւ գիշեր,  
հիւսում՝ էր քաթանեղէններ, գործում՝ գուլ-

բաներ, զարնանը ծաղիկներ էր քաղում, իսկ ամառը ժողովում էր մրգեղիններ եւ այդ բոլորը ծախտում էր Մոսկվայում։ Դիւրազգաց, բարի պառաւը տեսնելով աղջկայ անխոնջ գործունէութիւնը, շատ անգամ սեղմում էր նրան իր թոյլ կուրծքին. անւանում էր նրան Աստծոյ պարզեւը, իր խնամողը, իր զառամած կեանքի մխիթարութիւնն եւ աղօթում էր Աստուծուն, որ նա վարձատըէ նրան այն բոլորի փոխարէն, ինչ որ անում էր աղջիկը իր մօր համար։

—Աստած ինձ ձեռքեր է տւել աշխատելու համար, ասում էր միշտ Լիզան, —դու ինձ կերակրել ես քո կաթով, պահել ես ինձ ու պահպանել, այժմ իմ հերթս է քեզ համար հոգալ։ Միայն խնդրում եմ, բաւական է էլ մի շարչարիլ քեզ, էլ մի լար, արտասուլները չեն կենդանացնի մեր հայրիկին։

Բայց շատ անգամ նազելի Լիզան ինքը չէր կարողանում զսպել իր արտասուլը. ոհ... նա հասկանում էր, որ ունեցել է հայր, որ այժմ չըկայ, բայց մօրը հանգստացնելու

համար՝ ջանք էր անում ծածկել իր սրտի տիրութիւնը եւ երեւալ հանգիստ եւ ուրախ:

—Այն աշխարհում, սիրելի Լիզա, ասում էր ցաւազին պառար, այն աշխարհում միայն ես կը թողնեմ լացը: Այնտեղ, ասում են՝ բոլորեքեան ուրախ կը լինին, հարկաւ եւ ես ուրախ կը լինեմ, երբ կը տեսնեմ հօրդ: Միայն այժմ՝ չեմ ցանկանում մնոնել: Ի՞նչ կը պատահի քեզ ինձանից յետոյ: Ո՞ւմ յուսով թողեմ քեզ: Չէ, չէ, ես աղաչում եմ Աստծու առաջ, որ կարողանամ ապահովել քո կեանքը: Կարելի է շուտով կը գտնի մի քարի մարդ, այն ժամանակ օրհնելով ծեզ, իմ սիրելի երեխաներիս, կը խաչակնքեմ եւ հանգիստ կը պառկեմ խոնաւ հողի մէջ:

Լիզայի հօր մահւանից յետոյ անցաւ երկու տարի: Դաշտերը ծածկւեցան ծաղիկներով եւ Լիզան Մուկւա ծաղիկներ քերաւ ծախսելու: Մի լաւ հագւած երիտասարդ, հաճելի դէմքով, պատահեց նրան փողոցում:

Հիզան ցոյց տւեց ծաղիկները եւ կարմրեց:

— ծախովմ՝ ես ծաղիկները, աղջիկ, հարցրեց երիտասարդը ժպտալով:

— ծախովմ՝ եմ, պատասխանեց օրիորդը:

— Բայց ի՞նչ արժէն:

— Հինգ կոպէկ:

— Այդ շափազանց էժան է: Ահա քեզ մի բութի:

Հիզան զարմացաւ, համարձակւեց նայել երիտասարդին—աւելի եւս կարմրեց եւ աշքերը ցած ճգելով ասաց, որ մի բութի չի վերցնիլ:

— Ինչո՞ւ համար:

— Ինձ հարկաւոր չէ աւելորդ փող:

— Ես կարծում եմ, որ այն գեղեցիկ ծաղիկները, որոնք քաղաքած են մի գեղեցիկ աղջրկայ ճեռքով, արժէն մի բութի, բայց քանի որ դու շես վերցնում, ահա քեզ հինգ կոպէկ: Ես կըցանկանայի միշտ առնել քեզանից ծաղիկներ, կըցանկանայի որ դու քաղէիր միայն ինձ համար:

Լիզան տւառ ծաղիկները, վերցրեց հինգ  
կոպէկը, գլուխ տւեց եւ ցանկանում՝ էք հե-  
ռանալ, բայց անծանօթը քոնեց նրա ձեռ-  
քից եւ հարցրեց.

—Ո՞ւր ես զնոսմ՝ սոլջիկ:

—Տուն:

—Բայց ո՞րտեղ է քո տունը.

Լիզան ասաց՝ թէ որտեղ է ինքը բը-  
նակում՝ եւ հեռացաւ: Լիզան չուզեց արգե-  
լել նրան, շատ կարելի է նրա համար, որ  
անցնողները սկսել էին կանգնել եւ շարա-  
միտ ժամփով նրանց նայել:

Լիզան տուն հասնելով, մօքը պատմեց  
այն՝ ինչ որ պատահել էք նրա հետ:

—Դու լաւ ես արել, որ չես վերցրել  
բուքին: Շատ կարելի է, որ նա մի վատ  
մարդ էք...

—Ախ. ո՞չ մայրիկ, չեմ՝ կարծում, այն-  
պիսի բարի դէմք, այնպիսի ծայն ունէք որ...

—Սակայն Լիզա, լաւ է կերակրել սե-  
փական աշխատանքով եւ ձրի ոշինչ ըլվերց-  
նել: Դու դեռ չես իմանում, իմ՝ սիրելիս,

ինչպէս չար մարդիկ կարող են անպատճել իսեղ՝ աղջկան։ Ես միշտ անհանգիստ եմ՝ լինում, երբ դու գնում՝ ես քաղաք, միշտ ես մոմեր եմ՝ վառում՝ պատկերի առաջ եւ աղօթում՝ եմ՝ Աստծուն, որ նա քեզ ազատէ ամեն փորձանքից եւ դժբախտութիւնից։

Լիզայի աչքերի մէջ երեւեցան արտասուրի կաթիլներ եւ նա համըուրեց մօրը։ Միւս օրը Լիզան քաղեց ամենաընտիր ծաղիկներ եւ գնաց քաղաք։ Նրա աչքերը կարծես մի քան էին որոնում։ Շատերը ցանկանում էին գնել նրա ծաղիկները, բայց նա պատասխանում էր, որ ծախու չեն եւ մտիկ էր տալիս այս ու այն կողմ։ Երեկոյ եղաւ. պէտք էր վերադառնալ տուն. ուստի եւ նա ծաղիկները ծգեց Մոսկվա գետը։ Թող ոչ ոքի չըլինիք դուք, ասաց Լիզան՝ զգալով իւր սրտում՝ մի տեսակ վիշտ։ Միւս օրը երեկոյեան նստած պատուհանում՝ գործում էր եւ մեղմ ճայնով երգում՝ տըխուր երգեր, երբ յանկարծ վեր թռաւ եւ քացականչեց.—Աշխ. . . Անծանօթ երիտա-

սարդը կանգնած էր պատուհանի տակը:

—Ի՞նչ պատահեց քեզ, հարցրեց վախեցած մայրը, որ նատած էր նրա մօտ:

—Ոչինչ, մայրիկ, պատասխանեց Լիզան ամօթխածութեամբ, ես միայն տեսայ նրան...

—Ո՞ւմ:

—Այն պարսնին, որ զնեց ինձանից ծաղիկներ:

Պառաւը նայեց պատուհանից եւ երիտասարդը այնպէս քաղաքավարութեամբ, այնպէս հաճելի դէմքով զլուկի տւեց նրան, որ նա քացի լաւից, ոչինչ չէր կարող մըտածել:

—Բարեւ ձեզ, քարի պառաւ, ասաց նա, ես յոզնած եմ, շոնե՞ս արդեօք մաքուր կաթ:

Կամնակատար Լիզան ըսպասեց մօր պատասխանին, շատ կարելի է նրա համար, որ երիտասարդն իրան առաջուց ծանօթ էր, վազեց ներքնատուն եւ փայտէ մաքուր կուշով քերաւ մաքուր կաթ, վերցրեց քաժակը լաց մաքրեց անձեռոցիկով, լցրեց եւ պատու-

հանով տւեց Երիտասարդին, բայց տալու ժամանակ աչքերը խոնարհեցրել էր:

Անծանօթը խմեց եւ աստւածուհու ծեռքով տւած նեկտարը դրանից համով չեր կարող թւալ նրան: Հասկանա լի է, որ նա շնորհակալութիւն յայտնեց, իսկ Լիզան ոչ այնքան խօսքով, որքան աչքերով: Այդ միջոցին քարեհոգի պառաւը սկսեց պատմել իր ամուսնու մահը, իր աղջկայ սիրելի յատկութիւնները, նրա աշխատասիրութիւնն եւ քնքշութիւնը եւ այլն եւ այլն:

Երիտասարդը լսում՝ էր նրան ուշադրութեամբ, բայց աչքերը—պէտք է ասել թէ ուր էին ուղղած . . . Եւ Լիզան—նազելի Լիզան նայում՝ էր երբեմն Երիտասարդի վրայ, բայց կայծակն այնքան արագութեամբ չեր փայլում՝ ամպերի մէջ, որքան նրա կապոյտ ու գեղեցիկ աչքերը դառնում՝ էին դէպի ցած հանդիպելով պատմու հայեցքին:

—Ես կըցանկանայի, ասաց նա պառավին, որ քո աղջիկը, բացի ինձանից ոչ ոքի

վրայ չըծախէր իր աշխատանքը, այդպիսով  
նա ստիպւած չի լինիլ յաճախ գնալ քաղաք  
եւ դու հարկադրւած չես լինիլ բաժանւել  
նրանից: Ես ինքս երբեմն կըմտնեմ՝ ձեզմօտ:

Այդ ժամանակ Լիզայի աչքերի մէջ  
փայլեց ուրախութիւն, որ նա իզուր ցանկա-  
նում էր ծածկել, նրա թշերը բորբոքում  
էին ինչպէս ամարային երեկոյեան պարզ  
վերջալոյսը: Նա ակնարկը զցել էր իր ծախ  
թեւանիքին եւ ծալմում էր աջ ձեռքով:  
Պառան ուրախութեամբ ընդունեց երիտա-  
սարդի առաջարկութիւնը, չըկասկածելով  
թէ նրանում վատ դիտաւորութիւն կար:  
Նա հաւատացրեց անծանօթին որ Լիզայի  
գործած քաթանը եւ գուլպաները շատ լաւ  
են լինում եւ աւելի երկար ժամանակ են  
դիմանում քան միւսներինը: Արդէն մթնել  
էր, եւ երիտասարդը ցանկանում էր գնալ:

—Ինչպէս է քո անունդ, բարի եւ սի-  
րելի պարոն, հարցրեց պառաւը:

—Ինձ կոչում են Էքաստ, պատասխա-  
նեց անծանօթը:

*168/5*  
*1010*  
 „Երաստ, Երաստ . . . մոմոած ցածր  
 ծայնով Լիզան: Նա մի հինգ անգամ՝ էլ  
 կըկնեց այդ անունը, կարծես թէ ցանկա-  
 նում էր չըմոռանալ: Երաստը մնաս բար-  
 եաւ ասելով հեռացաւ: Լիզան ճանապարհ  
 որաւ նրան աչքերով, իսկ մայրը մտախոհ  
 կերպով նստեց եւ բռնելով աղջկայ ծեռքը  
 սսաց.

—Ահ, Լիզա, ինչպէս նա բարի եւ լաւ  
 էր. երանի քո փեսացուն այդպէս լինէր:  
 Լիզայի սիրտը տրոփում էր:—Ահ, մայրիկ  
 մայրիկ, այդ ինչպէս կարող է լինել, նա  
 աղա է, քաղաքացի է, բայց գիւղացիներիս  
 մէջ . . . Լիզան չըկարողացաւ աւարտել իր  
 խօսքը:

Այժմ ընթերցողը պէտք է իմանայ, որ  
 այդ երիտասարդը՝ այդ Երաստը բաւակա-  
 նին հարուստ ազնւական էր, նշանաւոր ինել-  
 քով եւ բարի սրտով, նա բարի էր բնութիւնից,  
 բայց թոյլ եւ թնթեւամիտ ուր փարում էր  
 անկարգ կեանք. մտածում էր միայն իր  
 բաւականութեամ մասին, որ նաև գոնում

Եր միայն աշխարհային գլաքառվթիւնների մէջ, բայց շատ անզամ՝ չէր գտնում. այդ պատճառով տիրում եւ զանգատում էր իր վիճակից: Լիզայի գեղեցկութիւնը՝ առաջի անզամ՝ պատահելիս նրա սրտի մէջ իոր տպաւորութիւն արաւ: Նա կարդում էր վեպեր, հովենրգութիւններ. բաւական կենդանի երեւակայութիւն ունէր եւ շատ անզամ՝ մտքով սլանում էր դէպ այն (եղած թէ չեղած) ժամանակները, երբ (եթէ հաւատալու լինինք բանաստեղծներին) քոլոք մարդիկը անհոգաբար ման էին զալիս մարզագետիններում, լողանում էին ջինջ աղքիւրներում, համբուրտում էին ինչպէս տատրակներ, հանգստանում էին վարդիների եւ մրտենիների տակ եւ անցուցանում էին իրանց օրերը երջանիկ տօնախմբութեան մէջ: Նա կարծում էր, թէ ինքը գտել է Լիզայի մէջ այն, ինչ որ իր սիրտը վաղուց էր պտրառմ: „Բնութիւնն ինձ հրաւիրում է իր զիրկը, իր անմեղ ուրախութեանց մէջ“, մուածում էր նա եւ վճուց գոնէ կարճ ժամա-

նակով թողնել մեծ մարդկանց շրջանը:

Դառնանք Լիզային: Գիշերը վրահասաւ. մայրն օրհնեց իր աղջկան, մաղթելով նրան հանգիստ քուն: Բայց այն անգամ՝ նրա ցանկութիւնը շըկատարւեց: Լիզան այս զիշեր շատ վատ էր քնել: Նրան հոգու նոր հիւրը՝ Էրաստի պատկերը, այնպէս կենդանի ներկայանում էր իրան, որ նա գրեթէ ամեն մի բոլէ զարթնում էր եւ հառաչում: Դեռ արեգակը չէր ծագել, երբ Լիզան վեր կացաւ զնաց Մոսկա գետի ափը, նստեց խոտի վրայ լի դառնութեամք, մտիկ էր տալիս սպիտակ ամպերին, որոնք ալեկոծում էին օդի մէջ եւ բարձրանալով դէպի վեր, թողնում էին փայլուն կաթիւները քնութեան կանանչ ծածկոցի վրայ: Ամեն տեղ տիրում էր խորին լոռութիւն: Բայց օրւայ ծագող լուսատուն անյապաղ զարթեցրաւ բոլոր արդաճներին. անտառները, թուփերը կենդանացան, թռչունները զարթեցին ու երգեցին, ծաղիկները բարձրացրին իրանց գլուխները, որ կերակրւեն արեգակի կենդանա-

բար ճառագայթներով, քայց Լիզան դեռ  
 նստած էր թախծութեամբ լի: Այ, Լիզա,  
 Լիզա, քեզ ի՞նչ է պատահել: Այդպէս շուտ  
 զարթնելով թռչուների հետ, դու, դու առա-  
 ւտեան վաղ զւարժացել ես նրանց հետ  
 եւ մաքուր ուրախալի հոգիդ վառում՝ է քո  
 աչքերում, ինչպէս արեգակը փայլում՝ է  
 երկնային ցողի կաթիլների մէջ, քայց այժմ՝  
 դու տրտում՝ ես եւ քնութեան ընդհանուր ու-  
 րախութիւնը խորթ է քո սրտին: Միեւնոյն  
 ժամանակ երիտասարդ հովիւր գետի եզեր-  
 քին արածեցնում՝ էր իր հօտը, փշելով սը-  
 րինզը: Լիզան ուղղեց իր հայւածքը նրա  
 վրայ եւ մտածում՝ էր: «Եթէ նա, որ զբաղեց-  
 նում՝ է այժմ՝ իմ՝ միտքը, ծննդով լինէր մի  
 հասարակ գիւղական հովիւր եւ եթէ նա այ-  
 ժըմ՝ իմ՝ մօտովս քշում՝ լինէր իր հօտը՝ ախ,  
 ես ժպտալով կ'երկրպազէի նրան եւ կա-  
 սէի քաղցրութեամբ, քարեւ, սիրելի հովիւր, ուր  
 ես քշում՝ քո հօտը... այստեղ էլ է քուսնում՝  
 կանաչ խոտ քո ոչխարների համար, այս-  
 տեղ էլ նոյնպէս փայում՝ են ծաղիկներ, ո-

նակով թողնել մեծ մարդկանց շրջանը:

Դառնանք Լիզային: Գիշերը վրահասաւ. մայրն օրհնեց իր աղջկան, մաղթելով նրան հանգիստ քոն: Բայց այն անգամ՝ նրա ցանկութիւնը չըկատարւեց: Լիզան այս զիշեր շատ վատ էր քնել: Նրան հոգու նոր հիւրը՝ Էրաստի պատկերը, այնպէս կենդանի ներկայանում էր իրան, որ նա զրեթէ ամեն մի բոպէ զարթնում էր եւ հառաջում: Դեռ արեգակը չէր ծագել, երբ Լիզան վեր կացաւ զնաց Մոսկւա գետի ափը, նստեց խոտի վրայ լի դառնութեամք, մոտիկ էր տալիս սպիտակ ամպերին, որոնք ալեկոծում էին օղի մէջ եւ բարձրանալով դէպի վեր, թողնում էին փայլուն կաթիլները քնութեան կանանչ ծածկոցի վրայ: Ամեն տեղ տիրում էր խորին լուսաթիւն: Բայց օրւայ ծագող լուսատուն անյապաղ զարթեցրաւ բոլոր արարածներին. անտառները, թուփերը կենդանացան, թոշունները զարթեցին ու երզեցին, ծաղիկները բարձրացրին իրանց զլուխները, որ կերակրւեն արեգակի կենդանա-

բար ճառագայթներով, բայց Լիզան դեռ  
 նստած էր թախծութեամբ լի: Այ, Լիզա,  
 Լիզա, քեզ ի՞նչ է պատահել: Այդպէս շուտ  
 զարթնելով թոշուների հետ, դու, դու առա-  
 ւտեան վաղ զւարժացել ես նրանց հետ  
 եւ մաքուր ուրախալի հոգիդ վառում՝ է քո  
 աչքերում, ինչպէս արեգակը փայլում՝ է  
 երկնային ցողի կաթիլների մէջ, բայց այժմ՝  
 դու տրտում՝ ես եւ ընութեան ընդհանուր ու-  
 րախութիւնը խորթ է քո սրտին: Միեւնոյն  
 ժամանակ երիտասարդ հովիւր գետի եզեր-  
 քին արածեցնում՝ էր իր հօտը, փշելով սը-  
 րինզը: Լիզան ուղղեց իր հայւածքը նրա  
 վրայ եւ մտածում՝ էր: «Եթէ նա, որ զբաղեց-  
 նում՝ է այժմ՝ իմ՝ միտքը, ծննդով լինէր մի  
 հասարակ գիւղական հովիւ եւ եթէ նա այ-  
 ժըմ՝ իմ՝ մօտովս քշում՝ լինէր իր հօտը՝ ախ,  
 ես ժպտալով կ'երկրպագէի նրան եւ կա-  
 սէի քաղցրութեամբ, բարեւ, սիրելի հովիւ, ուր  
 ես քշում՝ քո հօտը... այստեղ էլ է բուսնում՝  
 կանաչ խոտ քո ոչխարների համար, այս-  
 տեղ էլ նոյնպէս փայում՝ են ծաղիկներ, ո-

բոնցից կարելի է պսակ հիւսել քո զլխար-  
խարկի համար... Նա կընայէր ինձ վրայ  
քաղցր դէմքով, շատ կարելի է կ'առնէր իմ  
ձեռքը... մտորմունք... Հովիւը փշելով սրին-  
գը՝ անցաւ նրա մօտով եւ իր խայտաքղէտ  
հօտի հետ ծածկւեց մօտակայ ըլուրի յետեւ:

Յանկարծ Լիզան թիակների ճայն լսեց  
—նայեց դէպի զետը եւ տեսաւ մակոյկ իսկ  
մակոյկում—Երաստը:

Նրա բոլոր ջղերը ցնցւեցին, ի հարկէ  
ոչ երկիւղից: Նա վերկացաւ տեղից եւ ցան-  
կանում էր գնալ, բայց շրկարողացաւ: Ե-  
րաստը դուրս ցատկեց ափը, մօտեցաւ Լի-  
զային, որի մտորմունքը մասամբ կատար-  
ւեց, որովհետեւ Երաստը նրան քաղցր նայ-  
ւածքով նայեց եւ բոնեց նրա ձեռքը: Բայց  
Լիզան... Լիզան կանգնել էր բթացած հայ-  
ւածքով, վառվոռն այտերով եւ դողդոջին  
սրտով: Նա շրկարողացաւ խլել նրանից իր  
ձեռքերը, շրկարողացաւ յետ դառնալ, երբ  
Երաստը մօտենում էր նրան, իր վարդագոյն  
շրթունքներով... Ա՛խ, նա համբուրեց նրան,

այնպէս ջերմ համբուրեց նրան, որ նրան թւեց՝ թէ ամբողջ տիեզերքը կրակի մէջ այրում է . . .

„Նազելի Լիզա. ասաց Էրաստը, նազելի Լիզա, ես սիրում եմ քեզ“ եւ այս խօսքերը արձագանք գտան նրա սրտի խորքում, ինչպէս երկնային զմայլեցուցիչ երաժշտութիւն։ Նա նազիւ էր կարողանում հաւատալ իր ականջներին եւ . . . Բայց ձգում եմ գրիչս եւ կասեմ միայն, որ այդ հիացման բովէին Լիզայի ամօթիածութիւնը վերացաւ։—Էրաստը հասկացաւ, որ ինքը սիրահարւած է նոր, մաքուր եւ պարզ սրտով։

Նրանք նստել էին խոտի վրայ այնպէս, որ իրանց մէջ ըեւ տեղ էր մնացել, մտիկ էին տալիս իրաք աչքերի եւ ասում միմիանց. „Սիրիք ինձ“։ Եւ այդպիսով երկու ժամ անցաւ ինչպէս մի բովէ։ Վերջապէս Լիզան մտաքերեց, որ մայրը կարող է անհանգիստ լինել։ Բաժանւելու ժամանակ էր։

—Ախ, Էրաստ, ասաց Լիզան, արդեօք դու միշտ կըսիրե՞ս ինձ։

—Միշտ, սիրելի Լիզա, միշտ, պատասխանեց Էրաստը:

—Եւ դու կարող ես երդումնվ հաստատել այդ:

—Կարող եմ, սիրելի Լիզա, կարող եմ:

—Ոչ, ոչ ինձ հարկաւոր չէ երդումը: Ես հաւատում եմ քեզ, Էրաստ, հաւատում եմ: Միթէ դու կըխաբես ինդ՛ Լիզային: Այդ չի կարող պատահել:

—Չի կարելի, չի կարելի—նազելի Լիզա:

—Ինչպէս ես երջանիկ եմ եւ ինչպէս մայրս կուրախանայ, երբ իմանայ, որ դու ինձ սիրում ես:

—Ախ, ոչ Լիզա, նրան ոչինչ հարկաւոր չէ ասել:

—Ինչո՞ւ:

—Հին մարդիկ միշտ կասկածաւոր են լինում: Նա կարող է երեւակայել ուրիշ մի վատ քան—այդ չի կարող պատահել.—Սակայն քեզ ինդըրում եմ նրան ոչ մի խօսք չասել:

—Հան, հարկաւոր էքեզ հնազանդւել, թէ-  
եւ ես նրանից ոչինչ չեմ ցանկանալ թագ-  
ցնել:

Նրանք մասս բարեաւ ասելով, համբուր-  
ւեցին վերջին անգամ՝ եւ խոստացան ամեն  
օր երեկոյեան տեսնել կամ՝ գետի ափին  
կամ՝ թխտենիների անտառումը կամ՝ Լի-  
զայի խրճիթի մօտ միտեղ, միայն հաստատ,  
անպատճառ տեսնել: Լիզան գնաց, բայց  
նբա աչքերը հարիւր անգամ՝ դարձան դէ-  
սլի Էրաստի կողմը, որ դեռ եւս կանգնած  
էր ափումը եւ մտիկ էր տալիս օրիորդի յե-  
տեւից:

Լիզան վերադարձաւ խրճիթ, բայց ոչ  
այն տրամադրութեան մէջ, որ նա դուրս  
էր եկել այնտեղից: Նրա դէմքի բոլոր շար-  
ժողութեան վրայ երեւում՝ էր սրտագին ու-  
րախութիւն: «Նա ինձ սիրում՝ է», մտածում  
էր նա եւ զմայլում՝ իր այդ մնոքով:

—Ախ, մայրիկ, ասաց Լիզան մօրը, որ  
դեռ նոր զարթնել էր: Ախ, մայրիկ ինչպի-  
սի գեղեցիկ առաւօտ է, ինչպէս ուրախ է

դաշտի վրայ, երբէք արտուտները այնպէս  
լաւ չեն երգել, երբէք արեգակ այնպէս  
պայծառ չէ փայլել եւ երբէք ծաղիկները  
այդպէս անուշ չեն բուրել:

Պառաւը նեցուկ առնելով ձեռնափայ-  
տը՝ դուրս եկաւ դաշտը, առաւօտեան ընու-  
թեան գեղեցկութիւնը վայելելու, որ Լիզան  
նկարագրեց այդքան հրապուրիչ գոյներով:  
Եւ իրաւ, օրը նրան շափազանց դուրեկան  
երեւաց: Սիրելի աղջիկն իր ուրախութիւնով  
ուրախացրել էր մօր համար ամբողջ ընու-  
թիւնը:

—Ա՞ս, Լիզա, ասաց նա.—Ինչ լաւ է  
Աստծու գրկում: Վեց տասնեակ տարի  
ապրում եմ աշխարհի վրայ, բայց եւ այն-  
պէս չեմ կարողացել Աստծու գործերը  
նայելուց կշտանալ, չեմ կարողացել բաւա-  
կանանալ մաքուր երկնքին նայելուց, եւ եր-  
կրին, որ ծածկում է ամեն տարի նորա-  
նոր ծաղիկներով: Պէտք է, որ Երկնային  
Թագաւորը, շատ սիրելիս լինի մարդուն,  
քանի որ այդպէս լաւ է զարդարել այս աշ-

իսարհը: Այս Լիզա, էլ ով կըցանկանաք  
մեռնել, եթէ վիշտը չըլինէք. . . Երեւում է  
այդպէս է հարկաւոր: Շատ կարելի է մենք  
կըմոռանայինք մեր հոգին, եթէ մեր աչքե-  
րիցն երբէք արտասուզներ չըկաթէին:

Իսկ Լիզան այդ ժամանակ մտածում  
էք. Այս, ես աւելի շուտ կըմոռանամ իմ  
հոգին, քան իմ սիրելի ընկերին:

Դրանից յետոյ Երաստը եւ Լիզան վա-  
խենալով, թէ մի գուցէ չըկարողանան կա-  
տարել իրանց տւած խոստումը, ամեն երե-  
կոյ տեսնում էին (այն ժամանակ, եթք  
Լիզայի մայրը պառկում էր քնելու) կամ  
գետի ափին կամ թխտենիների անտառում,  
քայց յաճախ, ամենից շատ, հարիւրամեայ  
կաղնիների ստեղների տակ, (խրճիթից  
մօտ ութսուն սաժէն հեռաւորութեա վրայ),  
որոնք հովանաւորում էին մաքուր դեռ  
եւս հին ժամանակւանից փորւած լը-  
ճակը: Այնտեղ շատ անզամ անվրդով լուս-  
նեակը կանանչ ծիւղերի միջով արծաթա-  
փայլում էր իր ճառագայթներով Լիզայի

շեկ մազերը, որով խաղում էին զեփիւռը եւ սիրելի ընկերի ձեռքերը։ Շատ անգամ՝ այդ ճառագայթները լուսաւորում էին նազելի Լիզայի աչքերը, սիրոյ փայլող արտասուրները, որոնք միշտ ցամաքում էին Երաստի համբոյրով։ Նրանք գրկախառնուում էին, բայց ողջախո՞ն եւ ամօթխած Ցինտիան չէր ծածկում նրան իր ամպերի յետեւ, այնքան մաքուր եւ անկեղծ էր նրանց գրկախառնութիւնը։

—Երբ դու, ասաց Լիզան, երբ դու ինձ ասում ես՝ սիրում եմ քեզ, իմ՝ ընկեր, երբ դու սեղմում ես ինձ քո սրտիդ, հաճոյական աչքերովդ նայում ես ինձ վըրայ։ Այս... այն ժամանակ ես լինում եմ՝ այնպէս լաւ, այնպէս լաւ, որ ես համարեաթէ մոռանում եմ՝ ինձ, մոռանում եմ ամենը, բացի Երաստից։ Զարմանալի է... զարմանալի է, իմ՝ ընկեր, որ ես քեզ չըմանաշելուց առաջ կարողացել եմ՝ ապրել հանգիստ եւ ուրախ։ Այժմ՝ ինձ համար այդ անհասկանալի է, այժմ՝ մտածում եմ՝ որ

առանց քեզ կեանքը, կեանք չէ, այլ վիշտ  
եւ տիրութիւն է: Առանց քո աչքերին մու-  
թըն է պայծառ լուսինը, առանց քո ծայնի  
տիսուր է սոխակի երգը եւ առանց քո շըն-  
շառութեան անուշ հովիկն ինձ անհամայ է:

Երաստը զմնայլում՝ էր իր հովուժիով—  
այդպէս էր կոչում նա Լիզային եւ տեսնե-  
լով, թէ ոքքան նա նրան սիրում է, ինքն  
իրան աւելի սիրելի էր թում:

Ընդարձակ աշխարհի բոլոր փայլուն  
գլարձութիւնները նրան ոչինչ էին երեւում,  
համեմատած այն ուրախութիւնների հետ,  
որոնց մատակարարում՝ էր նրա սրտին ան-  
մեղ հոգու խանդալից բարեկամութիւնը:  
Զգլանքով էր մտածում նա այն արհամար-  
հելի վավաշոտութեան վրայ, որոնցով ա-  
ռաջ արքենում էին նրա զգայարանները:

—Ես կապրեմ Լիզայի հետ, ինչպէս  
եղքայր քրոջ հետ, մտածում՝ էր նա, նրա  
սէրը ի չարը չեմ գործ դնիլ եւ միշտ եր-  
ջանիկ կըլինեմ:

Անմիտ երիտասարդ. արդեօք ճանա-

շում՝ ես քո սիրտը, արդեօք դու կարող ես միշտ պատասխանատու լինել քո շարժմունքների մասին. եւ արդեօք խելքդ քո զգացմունքների թագաւորն է:

Լիզան պահանջում էր որ Երաստը միշտ շուտ շուտ գայ իր մօր մօր:

— Ես սիրում եմ նրան, ասում էր Լիզան եւ նրան քարի եմ ցանկանում՝ եւ ես կարծում եմ որ քեզ տեսնելը մեծ երջանկութիւն է ամենի համար:

Ցիրաւի պառաը ուրախանում էր, երբ տեսնում էր նրան: Նա սիրում էր խօսել Երաստի հետ իր հանգուցեալ ամուսնուցը եւ պատմել իր երիտասարդութիւնից՝ թէ ինչպէս հանդիպեց իր սիրելի հվանին, ինչպէս նա նրան սիրեց եւ ինչպիսի սէրից խաղաղութեան մէջ ապրել է նրա հետ:

— Ախ, մենք ոչ մի ժամանակ չենք կարողացել իրար նայելուց կշտանալ, մինչեւ այն ըուպէն, երբ անգութ մահը վերջ դրաւ նրան կեանքին: Նա մեռաւ իմ՝ ձեռքերի վրայ:

Էրաստը լսում էր նրան անգեղծ քաւականութիւնով, նա զնում էր պառաւից Լիզայի ձեռազործերը եւ ցանկանում էր ամեն անզամ՝ նշանակած զնից տասն անգամ՝ աւելի վճարել, բայց նա եռուէր աւելորդ փող չէր վերցնում:—Այդպիսով անցաւ մի քանի շաբաթ: Մի երեկոյ Էրաստը երկար սպասեց իր Լիզային: Վերջապէս նա եկաւ, բայց այնպէս տխուք, որ Էրաստը վախեցաւ: Օրիորդի աշքերը կարմ՛ել էին արտասուքից:

—Լիզա, Լիզա, այդ ինչ է պատահել քեզ.

—Այս Էրաստ, ես լաց եմ եղել:

—Ինչո՞ւ, ինչ է պատահել:

—Ես քեզ քոլորը կասեմ: Ինձ հետ ցանկանում է ամուսնանալ հարեւան գիւղի հարուստ գիւղացու որդին, մայրս էլ համաձայն է:

—Դու էք համաձայնում ես:

—Անգութ, կարող ես արդեօք դու ինձ այդ հարցը առաջարկել. բայց ես խղճում

եմ մօրս, նա լաց է լինում ու ասում, թէ  
ես չեմ ցանկանում նրա հանգստութիւնը,  
թէ ինքը կըտանջի իր մահւան ժամանակ,  
եթէ ինձ չի ամուսնացնիլ (իր կենդանու-  
թեան ժամանակ): Ահ. մայրիկը չի իմա-  
նում, որ ես ունեմ այսպիսի նազելի ընկեր:  
Էրաստը համբուրում էր Լիզային եւ ասում  
որ նրա երջանկութիւնն իրան համար ա-  
մենից թանգ է, թէ մօր մահւանից յետոյ  
նա կըվերցնի նրան իր մօտ եւ կապը նրա  
հետ անբաժան, գիւղումը, խիտ անտառնե-  
րի մէջ ինչպէս արքայութիւնում:

—Սակայն, դու չես կարող լինել իմ  
ամուսին, ասաց Լիզան, հանդարտ հոգոց  
հանելով:

—Ինչո՞ւ.

—Ես գեղջկուհի եմ:

—Դու ինձ անպատում ես: Քո ընկե-  
րի համար ամենազլիսաւորն է հոգին, զզա-  
յուն անմեղ հոգին եւ Լիզան միշտ կըլինի իմ  
սրտի ամենամտերիմը:

Օրիորդը ընկաւ նրա գիրկը: Նրանք

գրկախառնւեցին եւ հասել էր անարատութեան անհետանալու ժամը: Էրաստը լզգում էր իր արեան մէջ անսովոր յուզմունք, երբէք Լիզան նրան այնքան սքանչելի չէր երեւացել, երբէք նրա փայփայանքը չէր շարժել նրան այնպէս սաստիկ, երբէք նրա համբոյըներն այնքան բոցոտ չեն եղել—նա ոչինչ չէր իմանում, ոչինչ չէր կասկածում եւ ոչնչից չէր վախենում—երեկոյեան մասսախուղը աւելի էր վառում կերքը, ոչ մի աստղիկ չէր փայլում երկնքումը, ոչ մի ճառագայթ չէր կարող լուսաւորել մոլորութիւնը: Էրաստը դողում է. Լիզան նոյնպէս, չիմանալով թէ ինչո՞ւ համար, չիմանալով թէ ինչ է կատարում իր հետ . . . Ախ, Լիզա, Լիզա, ո՞րտեղ է քո պահապան հրեշտակն եւ որտեղ է քո անմեղութիւնը:

Անցաւ մի բոպէ. Լիզան չէր հասկանում իր զգացողութիւնները. զարմանում է եւ հարցնում: Էրաստը լուռ էր—խօսքեր էր որոնում եւ չէր գտնում:

Ախ, ես վախենում եմ, ասաց Լիզան,

վախենում՝ եմ՝ մեզ հետ պատսհածից, ինձ  
թուում՝ էր, թէ ես մեռնում՝ եմ, որ իմ՝ հո-  
գին . . . Ոչ, ոչ չեմ՝ կարող ասել: Դու  
լուու ես Էրաստ, հառաջում՝ ես . . . Աս-  
տած իմ՝ այս ի՞նչ է . . .

Այդ միջոցին կայծակը փայլեց եւ որո-  
տաց ամպը: Լիզան ամբողջ մարմնով դո-  
ղաց:

—Էրաստ, Էրաստ, ես զարհուրում՝ եմ:  
Ես վախենում՝ եմ, որ որոտն ինձ սպա-  
նի, ինչպէս յանցաւորի:

Սպառնալի աղաղակում՝ էր փոթորիկը,  
անձրեւը թափուում՝ էր սեւ ամպերից—երե-  
ւում՝ էր, որ ընութիւնը քողոքում՝ էր Լիզայի  
կորցրած անմեղութեան համար. Էրաստը  
աշխատում՝ էր հանգստացնել Լիզային եւ  
ճանապարհ որաւ նրան մինչեւ խրճիթը:  
Արտասուք էր կաթում աշքնըրից, երբ հը-  
րաժարում՝ էր Էրաստից:

—Ախ Էրաստ, հաւատացրու ինձ, որ  
մենք առաջւայ պէս քախտաւոր կըլինենք,  
ասաց Լիզան:

— Կըլինենք, կըլինենք, Լիզա, պատասխանեց Էրաստը:

— Տայ Աստւած: Ես չեմ կարող ըբհաւատալ քո խօսքերին, չէ՞ որ քեզ սիրում եմ միայն իմ սրտում: . . մնաք բարեաւ վաղը, վաղը կըտեսնենք . . .

Նրանց տեսութիւնները շարունակում էին երկար—բայց ի՞նչպէս բոլորը փոխւել էր: Էրաստը այլ եւս չէր կարող բաւականանալ միայն Լիզայի անմեղ փայփայանքներով, միայն նրա սիրալիո նայեացքով; միայն ձեռքերը շօշափելով, միայն համբոյրներով եւ անմեղ գրկակառութիւններով: Նա ցանկանում էր աւելի, աւելի եւ վերջապէս ոչինչ ցանկանալ չէր կարողանում: Բայց ով իմանում է իր սիրտը, ով որ խորհել է իր քնքոյշ վայելչութիւնների յատկութիւնների վրայ, նա անպատճառ կըհամաձայնի ինձ հետ, որ բոլոր ցանկութեան կատարումը, սիրոյ ամենաերկիրդալի փորձանքն է:

Էրաստի համար Լիզան չէր այն անմեղ

Տրեշտակը, որ առաջ զոգում՝ էք նրա երեւակայութիւնը եւ զմայլեցնում՝ էք հոգին։ Պլատոնական սէրը տեղի էք տւել այնպիսի զգացումների, որոնցով չէք կարող նաև հպարտանալ, որոնք նրա համար նոր չէին. ինչ վերաբերում՝ էք Լիզային, նա քոլորովին նրան էք անծնատուր եղել, նրանով էք միայն ապրում եւ շնչում, հնազանդում՝ էք նրա կամքին ինչպէս զար, եւ նրա քաւականութեան մէջ էք կարծում՝ քախտաւորութիւնը։ Նա նկատում էք Էրաստի մէջ փոփոխութիւն եւ յաճախ ասում՝ էք.

—Առաջ դու աւելի ուրախ էիր լինում, առաջ մենք աւելի քախտաւոր եւ հանգիստ էինք. առաջ ես այնպէս չէի վախենում՝ կորցնել քո սէրը։

Երբեմն Լիզայից հրաժարւելիս Էրաստը ասում՝ էք—վաղը ես չեմ կարող տեսնել քեզ հետ, ինձ հարկաւոր զործ ունիմ՝ եւ ամեն անզամ՝ այս խօսքերը լսելիս՝ Լիզան հառաչում՝ էք։

Վերջապէս հինգ օր շարունակ Լիզան

ըրտեսաւ Երաստին, ուստի եւ շատ անհանգիստ էր: Վեցերորդ օրը եկաւ Երաստը տխուր դէմքով եւ մսաց. Սիրելի Լիզա. ես պէտք է մի քանի ժամանակւայ համար հրաժարւեմ քեզանից: Դու իմանում ես, որ այժմ՝ պատերազմ՝ է եւ ես ծառայութեան մէջ եմ—իմ զօրագունդը նոյնպէս պատերազմ՝ զնում: Լիզան գունաթափւեցաւ եւ քիչ մսաց ուշաթափւէր:

Երաստը փայփայում էր նրան եւ ստոմ, որ ինքը միշտ սիրելու է նազելի Լիզային եւ յոյսով է, որ վերադառնալուց յետոյ երբէք նրանից չի բաժանեիլ: Լիզան լուռ էր, յետոյ թափելով արտասուրի դառն կաթիլները, բռնեց Երաստի ծեռքը եւ նայեց նրա վրայ սիրոյ բոլոր քնքշութեամբ եւ հարցըեց.

—Դու չե՞ս կարող մսալ:

—Կարող եմ, պատասխանեց Երաստը, միայն միծ անպատութեամբ, որով եւ կարատաւրի իմ պատիւը: Բոլորը կըծաղրեն ինձ, բոլորը կ'արհամարհեն ինձ, ինչպէս

Երկշութի եւ հայրենիքի անարժան որդու:

—Ա իս, եթէ այդպէս է, ասաց Լիզան,  
ուրեմն գնա, գնա, ուր Աստւած հրամայում  
է: Բայց կարող են քեզ սպանել...

—Հայրենիքի համար մահը սարսափե-  
լի չէ, սիրելի՝ Լիզա:

—Ես կը մեռնեմ, եթէ դու չես լինիւ  
աշխարհումը:

—Բայց ինչո՞ւ ես այդպէս մտածում:  
Ես յոյս ունեմ, որ կենդանի կը մսամ՝ եւ կը  
վերադառնամ քո՝ իմ ընկերիս մօս:

—Աստւած անի, Աստւած անի: Ամեն  
օր, ամեն ժամ՝ ես այդ մասին եմ աղօթե-  
լու: Ա՛խ, ինչու ես չեմ՝ իմանում զրել ու  
կարդալ: Դու կը յայտնէիր ինձ բոլորը ինչ  
որ քեզ կը պատահէր, իսկ ես կը գրէի  
քեզ իմ արտասուբների մասին:

—Ոչ, պահպանիր քեզ, Լիզա, պահպա-  
նիր քո ընկերի համար: Ես չեմ՝ ցանկանում  
որ դու առանց ինձ լաց լինես:

—Անգն՛թ մարդ, դու մտածում՝ ես  
զրկել ինձ եւ այդ ուրախութիւնից: Ոչ, քե-

զանից հեռանալուց յետոյ՝ միայն այն ժամանակ կը թողնեմ լացը, երբ կը չորանայ իմ սիրտը:

—Մտածիր այն քաղցր բովէի մասին,  
երբ մենք կը կին կը տեսնենք:

—Կը մտածեմ, կը մտածեմ նրա վրայ:  
Այս եթէ նա շուտ զար: Սիրելի եւ նազելի  
Էրաստ, յիշեր, յիշեր թշւառ Լիզային, որը  
քեզ աւելի է սիրում, քան իր անձը:

Բայց ես չեմ կարող նկարագրել այն  
քոլորը, որ նրանք խօսեցին այդ բովէին:  
Միւս օրը նշանակւած էր վերջին տեսու-  
թիւնը:

Էրաստը ցանկանում էր հրաժարական  
ողջոյն տալ, Լիզայի մօրը՝ որու ընկարողացաւ  
զսպել իր արտասուրը, երբ լսեց՝ թէ սիրե-  
լի ու գեղեցիկ պարոնը պէտք է զնայ պա-  
տերազմ: Էրաստը համոզեց նրան վերցնել  
մի քանի դրամ, ասելով—„Ես չեմ ցանկա-  
նում, որ Լիզան իմ քացակայութեան ժա-  
մանակ ծախէ իր ճեռագործերը, որոնք մեր  
պայմանի համաձայն ինձ են պատկանում”:

Պառան իր օքնութիւնները տալով  
Էրաստին՝ ասաց.—Տայ Աստւած, որ դու  
յաջողութեամբ վերադառնաս մեզ մօտ եւ  
ես քեզ կրկին անգամ՝ տեսնեմ՝ այստեղ  
կենցաղավարութեան մէջ։ Չատ կարելի է  
իմ Լիզան մինչ այն ժամանակ կը գտնէ ի-  
րան յարմար փեսացու։ Ինչպէս ես շնորհա-  
կալ կը լինէի Աստւածանից, եթէ դու զա-  
յիր մեր հարսանիքին։ Եւ երբ Լիզան երե-  
խայք կունենայ՝ իմացիր, պարոն, որ դու  
պէտք է կնքահայք լինես։ Ախ, ես շատ  
կը ցանկանայի մինչեւ այն ժամանակ ապրել։  
Լիզան կանգնած էր մօր մօտ եւ չէր հա-  
մարձակում նայել նրան։ Ընթերցողը կա-  
րող է երեւակայել թէ նա ինչ էր զգում այդ  
ըուպէին։

Բայց ի՞նչ էր զգում նա, երբ Էրաստը  
վերջին անգամ՝ գրկելով նրան, վերջին ան-  
գամ՝ սեղմելով իր կրծքին ասաց.—„Ներիր,  
Լիզա . . . “։ Ի՞նչ սրտաշարժ տեսարան  
էր։ Առաւոլեան արշալոյսը ինչպէս կը ակի  
ծով, պատեց Արեւելքը, Էրաստը կանգնել

Էր քարձը կաղնու ծղների տակ՝ պահած իր գրկում՝ գունաթափ, անզօր, վշտագին ընկերին, որ նրանից հրաժարւելով, հրաժարում՝ էր իր հոգուցը: Բոլոր բնութիւնը խորին լուլթեան մէջ էր գտնում:

Լիզան հեծում՝ էր, Էրաստը լալիս. վերջինս թողեց առաջինին, որն ընկաւ ծընկերի վրայ, քարձրացրեց ճեռքերը ղէպի երկինք եւ նայում՝ էր Էրաստին, որ հեռանում՝ էր—հեռու, հեռու եւ վերջապէս անյայտացաւ: Փայլում՝ էր արեգակը, իսկ թողւած թշւառ Լիզան գրկւել էր զգացողութիւնից եւ յիշողութիւնից:

Նա ուշքի եկաւ եւ աշխարհը նրան տրխուր ու տրտում՝ երեւաց: Բնութեան բոլոր գւարծութիւնները ծածկւել էին նրա համար, իր սրտի սիրելուն հետ.—Ախ, մոտածում՝ էր նա, ինչո՞ւ ես մնացի այս անապատումը: Ի՞նչն է արգելում՝ ինձ, թոշել իմ նազելի Էրաստի հետքից: Պատերազմը զարհութելի չէ ինձ համար, զարհութելի է այնտեղը, որտեղ չըկայ իմ ընկերս: Նրա հետ ապրել

նրա հետ մեռնել եմ՝ ես ցանկանում, կամ՝  
 իմ՝ մահովս ազատել նրա թանկագին կեան-  
 քը: „Սպասիր, սպասիր, իմ՝ սիրելիս, ես  
 թոշում՝ եմ՝ քո յետելից“: Ես ցանկանում  
 եմ՝ վազել Էրաստի յետելից, քայց այս  
 միտքը՝ „Ես մայր ունիմ“ կանգնեցրեց նրան:  
 Լիզան հառաշեց եւ խոնարհեցնելով գլուխը,  
 հանդարտ քայլերով գնաց դէպի իր խրճիթը:  
 Սկսած այս ժամից նրա օրերը տիսրութեան  
 վշտի օրեր էին, որ պէտք է նա թագցնէր  
 իր նազելի մօրիցը, որով աւելի տանջում՝  
 էր նրա սիրտը: Միայն այն ժամանակ է  
 թեթեանում նա, այդ սիրտը, երբ Լիզան  
 առանձնալով անտառի խորութեան մէջ, կա-  
 րողանում էր ազատ թափել արտասուրնե-  
 րը եւ ողբալ իր թանգագին ընկերից քա-  
 ժանւելը: Շատ անզամ՝ տիսով տատրակը,  
 միացնում էր իր գանգատի ծայնը, նրա հա-  
 ռաշանքի հետ: Բայց երբեմն—թէպէտ եւ  
 շատ հազիւ—յուսոյ ոսկի ճառագայթը, մը-  
 խիթարութեան ճառագայթը լուսաւորում էր  
 նրա տրտմութեան մուայլը:

նրա հետ մեռնել եմ՝ ես ցանկանում, կամ՝  
իմ՝ մահովս ազատել նրա թանկագին կեան-  
ըը: „Սպասիր, սպասիր, իմ՝ սիրելիս, ես  
թռչում եմ քո յետեւից“: Ես ցանկանում  
եմ վազել Էրաստի յետեւից, բայց այս  
միտքը՝ „ես մայր ունիմ“ կանգնեցրեց նրան:  
Լիզան հառաջեց եւ խոնարհեցնելով գլուխը,  
հանդարտ քայլերով զնաց դէպի իր խրծիթը:  
Սկսած այս ժամից նրա օրերը տիրութեան  
վշտի օրեր էին, որ պէտք է նա թագանէր  
իր նազելի մօրիցը, որով աւելի տանջում  
էր նրա սիրտը: Միայն այն ժամանակ է  
թեթեանում նա, այդ սիրտը, երբ Լիզան  
առանձնալով անտառի խորութեան մէջ, կա-  
րողանում էր ազատ թափել արտասուրնե-  
րը եւ ողբալ իր թանգագին ընկերից քա-  
ժանւելը: Շատ անգամ՝ տիսով տատրակը,  
միացնում էր իր զանգատի ծայնը, նրա հա-  
ռաչանքի հետ: Բայց երբեմն—թէպէտ եւ  
շատ հազիւ—յուսոյ ոսկի ճառագայթը, մը-  
խիթարութեան ճառագայթը լուսաւորում էր  
նրա տրտմութեան մոայլը:

— Ինչպէս ես քախտաւոր կը լինեմ, եթզ  
նա կը վերադառնայ: Ինչպէս բոլորը կը փոխ-  
ի... Այդ մտքից պայծառանում էր նրա  
նայլածը. այտերի վրայ վարդերը փայլում  
էին, Լիզան ժպտում էր, ինչպէս մայիսի ա-  
ռաւոտ, մըրկալի գիշերից յետոյ:

Այսպիսով անցաւ մօտաւորապէս երկու  
ամիս: Մի օր Լիզան պիտի գնար Մոսկվա,  
վարդաջուր գնելու, որով բժշկում էր իր  
մօք աչքերը: Ամենամեծ փողոցներից մէկում,  
նրան հանդիպեց շքեղազարդ կառը եւ այդ  
կառքումը նա տեսաւ Էրաստին: «Ախ» բա-  
ցականչեց Լիզան եւ նետեց դէպի նա, քայց  
կառըն անցաւ մօտովը, դարձաւ ու կանգ-  
նեց մի դոան առաջ: Էրաստը դուրս եկաւ  
եւ կամենում էր արդէն քարծրանալ հոյա-  
կապ տան պատշգամքը, եթզ յանկարծ տե-  
սաւ իրան Լիզայի գրկումը: Նա գունաթափ-  
ւեց եւ ոչ մի խօսքով անզամ՞չը պատասխա-  
նելով նրա բացականչութեանը, քոնեց նրա  
ձեռքից, տարաւ իր առանձնասենեակը, փա-  
կեց դուռը եւ ասաց. Լիզա, հանգամանքնե-

ըս փոխւել են, ես այստեղ նշանած եմ,  
դու պէտք է թողնես ինձ հանգիստ եւ քո  
հանգստութեանդ համար ինձ մոռանաս: Ես  
սիրել եմ քեզ եւ այժմ սիրում եմ, այսինքն  
ցանկանում եմ քեզ ամեն բարիք: Ահա հա-  
րիւր բուբլի—վերցրու (նա ռըեց փողը Լի-  
զայի գրապանումը), թոյլ տուր ինձ վերջին ան-  
գամ համբուրել եւ զնա՞ տուն“: Մինչեւ որ  
Լիզան ուշքի կըզար, նա դուրս քերեց նրան  
առանձնասենեակից եւ ասաց ծառային՝  
„Ճանապարհ ծզիր այս օրիորդին զաւթի  
կողմից:“

Այս բոպէին սիրոս լցւում է արիւնով:  
Ես մոռանում եմ էրաստի մարդութիւնը—  
պատրաստ եմ նրան անիծելու, բայց իմ լե-  
զուն չի շարժւում: Նայում եմ երկնքին եւ  
արտասուքը զլորւում է իմ աշքերից: Ախ,  
ինչո՞ւ եմ գրում մի տիտոր անցք, այլ ոչ  
թէ վէպ:

Եւ այդպիսով էրաստը խաբեց Լիզա-  
յին, ասելով թէ զնում է պատերազմ: Ոչ,  
նա իսկապէս եղել է պատերազմում, բայց

փոխանակ թշնամու դէմ կուելու, նա թուղթ  
էր խաղում՝ որով իր բոլոր կարողութիւնը  
տանել տւալ: Շուտով խաղաղութիւն հաստա-  
տեցին եւ Էրաստը վերադարձաւ Մոսկվա՝  
ծանրաբեռնած պարտքերով: Նրան մոտմ  
էր միայն մի հնար՝ իր հանգամանքները  
ուշացնելու համար—ամուսնանալ չափահաս  
եւ հարուստ այրիի հետ, որ վաղուց սիրա-  
հարւած էր նրա վրայ: Նա վճռեց այդ եւ  
տեղափոխւեց այրիի մօտ, նրա տունը, նը-  
լիրելով իր Լիզային մի անկեղծ հառաջանք:  
Բայց արդեօք այդ բոլորը կարո՞ղ են նրան  
արդարացնել: Լիզան ուշքի եկաւ փողոցու-  
մը եւ մի այնպիսի դրութեան մէջ, որ ոչ  
մի զրիչ չէ կարող նկարագրել: „Նա, նա  
ինձ արտաքսեց: Նա սիրո՞ւմ է ուրիշին: Ես  
կորած եմ, ահա նրա մտքերն ու զգացմունք-  
ները:

Անգութ ուշագնացութիւնը կտրեց այդ  
խօսքը մի առժամ: Մի բարի կին, որ գնում  
էր փողոցով, կանգնեց Լիզայի մօտ, որն  
ընկած էր գետնի վրայ եւ աշխատեց նրան

ուշքի բերել: Դժբախտը բացեց իր աչքերը—  
կանգնեց այդ բարի կնոջ օգնութիւնով, շը-  
նորհակալութիւն արեց եւ զնաց ինքն էլ  
չիմանալով որտեղ: «Ես ապրել չեմ՝ կարող  
(մտածում էր Լիզան) չէ, չեմ՝ կարող . . .  
Օ՛, եթէ երկինքը փո՞ւլ գար ինձ վրայ,  
եթէ երկիրը կլանէր թշւառիս... ոչ, երկինքը  
չի ընկնում եւ երկիրը չի շարժում . . .  
վայ ինձ: Նա դուքս եկաւ քաղաքից եւ յան-  
կարծ իրան տեսաւ մի խոր լճակի ափին,  
հին թիստենիների շւաքի տակ, որոնք մի  
քանի շաքաթ առաջ նրանց ցնծութեան լուռ  
վկաներն էին: Այս յիշատակութիւնը շար-  
ժեց նրա հոգին եւ սրտի ամենատոսկալի  
տանջումը ծեւակերպւեց նրա երեսին: Բայց  
մի քանի ըոսէից յետոյ ընկղմնեց նա մը-  
տածողութեան մէջ—յետոյ նայեց իր շուր-  
ջը, տեսաւ իր հարեւանի աղջկան (տասն  
հինգ տարեկան օրիորդ), որը ձանապարհով  
գնումէր, կանչեց նրան Լիզան, հանեց գրպա-  
նիցը տասն հատ իմակերեւաշ եւ տալով նրան՝  
ասաց. „Միրելի՛ Աննա, սիրելի ընկեր, տար

այս փողերը մօրս տուր, դրանք գողացած չեն, ասա նրան, որ Լիզան մեղաւոր է որ ծածկել եմ՝ նրանից իմ՝ սէրը դէպի մի անգութ մարդ... ինչի՞դ է հարկաւոր իմանալ նրա անունը։ Ասա որ նա դաւաճանել է ինձ, ինողիք որ նա ինձ ների։ Աստւած կըլինի նրա օգնականը։ Համբուրիք նրան ծեռքն այնպէս, ինչպէս այժմ՝ ես քոնը համբուրում եմ, ասիք որ թշւառ Լիզան ինողից համբուրել ծեռքը, ասաց որ ես“...

Այդտեղ նա նետւեց ջուրը։ Աննան բըղաւեց, լաց եղաւ, քայց չըկարողացաւ ազատել նրան։ Վազեց գիւղը, հաւաքւեցին մարդիկ, հանեցին Լիզային, քայց նա արդէն մեռած էր։ Այդպիսով վերջացրեց իր կեանքը նա, որ գեղեցիկ էր հոգւով եւ մարմնով։ Երբ, մենք այնտեղ նոր կեանքումը կըտեսնենք, ես կըմանաշեմ քեզ, նազելի Լիզա։

Նրան թաղեցին լմի մօտ մոայլ թըխտենու տակ եւ կանգնացրին փայտէ խաչ նրա գերեզմանի վրայ։ Այդտեղ յաճախ

մուածութեան մէջ նստում եմ՝ ես յենւելով Հիզայի շիրմի վրայ: Աչքիս առաջ լիճն է խոխոցում, զլիավերեւս տերեւներն են սօսափում: Հիզայի մայրը լսեց իր աղջկայ մահը եւ նրա արիւնը պաղեց—աչքերը յափեան ծածկւեցան: Խընկիթը դատարկեց: Նրա մէջ փշում է հողմը եւ սնապաշտ շինականները, լսելով գիշերները այդ ձայնը՝ ասում են „այնտեղ հառաչում է մեռեալը, այնտեղ հառաչում է թշւառ Հիզան“:

Էրաստը մինչ իր կեանքի վերջը ղըժբախտ էր: Իմանալով Հիզայի օրհասը, նա չըկարողացաւ միսիթարւել եւ համարում էր իրան մարդասպան: Ես ծանօթացայ նրա հետ իր մահից մի տարի առաջ: Նա ինքը պատմեց այս պատմութիւնը եւ տարաւ ինձ Հիզայի գերեզմանի մօտ: Այժմ, շատ կարելի է նրանք արդէն հաշտելուն:



# ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Է:

Թ. Կ.

1.	„Աղբիւր“	84 թ.	—	—	—	3	—
2.	”	87 թ.	—	—	—	3	—
3.	”	83 թ.	—	—	—	10	—
4.	”	85 թ.	—	—	—	10	—
5.	”	86 թ.	—	—	—	10	—
6.	”	88 թ.	—	—	—	4	—
7.	”	89 թ.	—	—	—	3	—
8.	”	90 թ.	—	—	—	3	—
9.	Տարտազ	90 թ.	—	—	—	3	—
10.	Փայտաշենք խթանից սպիտակ տունը. պատկերագիր	—	—	—	—	60	—
11.	Հակայ մրջիւնն, պատ.	—	—	—	—	40	—
12.	Ժամ Բատ. Լիւլիի մասնկ.	—	—	—	—	10	—
13.	Ռուկ ձկնիկ, Պոռշկիկ	—	—	—	—	30	—
14.	” II սերիա	—	—	—	—	5	—
15.	Մշակնած եւ անմշակնառի կետանը	—	—	—	—	30	—
16.	Չար. Արամի արկած.	—	—	—	—	50	—
17.	Ֆրիտոֆ դիոց. (պատկ.)	—	—	—	—	40	—
18.	Քամար Խոսնակ	—	—	—	—	50	—
19.	Պօզնանի ուսուոցի օրագ..	—	—	—	—	20	—
20.	Աշ. Դոյէ. Երկու մանրավեկայ	—	—	—	—	15	—
21.	Անդրսուն, Սոխնակ եւ Խոզարնած	—	—	—	—	15	—
22.	Դիկենս, Հայր եւ սկզբ.	—	—	—	—	15	—
23.	Հըլըցէ-Կըճ. Աղբարփեշակը	—	—	—	—	25	—
24.	Երեխնաները եւ Արանց բարեկամները	—	—	—	—	40	—
25.	Զ. Աղայեան, Արեգնազան	—	—	—	—	40	—
26.	Տորք Ազգի եւ Հայերանուշ զեղեցիկ	—	—	—	—	40	—
27.	Տիգօ, Ղալի աղաթահերան	—	—	—	—	1	—
28.	Ա. Մ. Ե. Պ. Ճաշակ (ընտիր բանաստ.)	—	—	—	—	25	—
29.	Ն. Տ. Անետիքեան, Տեղագրուական աամնականի	30	—	—	—	—	—
30.	Օրացոյց մեծադիր պատկերագիր 90 թոհի	30	—	—	—	—	—
31.	Փոքրադիր	—	—	—	—	15	—
32.	Փ. Վարդ., Արեւնելեան վիստաշխարին	—	—	—	—	20	—
33.	Բասկական Լեզնելոս	—	—	—	—	20	—
34.	Յ. Ղազարեան Գիուղէ	—	—	—	—	15	—

35.	Գալիայ, թարգմ' Ս. Հայոսմեան:	—	10
36.	Աղա-Մահմէտ Շահը Ծուշումթարգ. չ. Ա-	—	2
	ուաքեղեան	—	
37.	Թաֆֆի Մինը այսպէս Մինը այնպէս—	—	1
38.	Պարսկական զրոյցներ Ա. Փափազեանց	—	5

## Օրացոյցներ 1891 թւականի.

		Թ. Կ.
38.	Ժոցի	— 5
39.	Նոյնը ընտիր թղթի վրայ	— 20
40.	Գրպանի պատկերագարդ	— 15
41.	Նոյնը ընտիր թղթի վրայ	— 50
42.	Մեծադիր դատկերագարդ սեղանի ջիակա- տար շատ կարեռոր տեղեկութիւններով	30
43.	Նոյնը ընտիր թղթի վրայ	— 1 —
44.	Կանանց համար յատկապէս, կարեռոր յա- ռելիածներով Կանանց Ընկ. Կանոնադրու- թիւններ եռ այլն	— 40
45.	Նոյնը ընտիր թղթի վրայ	— 1 —
46.	Պատի—հարուստական—	— 50
47.	Պատի—տախտակ օրացոյց Բողոք հրատարակութիւններից մի-մի օրինակ զնողը ճանապարհածախս չէ վճարում:	—

## ՊԱՏԿԵՐՆԵՐ

48.	Պարոյր Հայկազն եռ Մովսէս Խորենացի	— 50
49.	Ս. Սահմակ եռ Մեսրոպ	— 50
50.	Զմեռ (օղօգորաֆիա)	— 50
51.	Մոգերի երկրպագութ.	— 3
52.	Արշալոյս	— 3
53.	Յիսոս Խաչակիր	— 3

„Աղբիւրի“ եւ „Տարագի“ բաժա-  
նորդները ճանապարհածախս չեն վը-  
ճարում:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0058750

A 16815